



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Dioceſe of the Armenian Churc̄h of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Արժանաշնորհ
Տ. Բարգէն ՔՀՆՅ. Սակսուտեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ա. Երբորդութիւն Եկեղեցւոյն
Պոսթն.

Մարտ 13, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Սիրելի Տէր Բարգէն,

Ստացած ենք Ծուակիր Զեր Միական տեղե-
կաբութիւնը, որով կը Հաղթիքէիք թէ Զեր Նախագահութեամբ տեղի
ունեցած է Համայնքիդ Միական Խորհուրդի անդամոց ընտրութիւնը.
Եւ Ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը Խնդրէիք ընտրուած
անձանց պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կեր-
պով ընտրուած են եւ ընտրողներու վստահութիւնը կը Վայելեն իբ-
րև Եկեղեցւոյն Նախանձախնդիր, անձնուեր եւ պարտաճանաչ անդամ-
ներ, գրովս կը Վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեա-
լին.-

Տիար՝ Խորին Խոլլիկեան

Ճան Սուրսուրեան
Թարութիւն Հետիցեան
Զօր. Սարգիս Զարդարեան
Զարգի Կարապետեան
Կարապետ Թաշնեան

Կօրհնենք Միական Խորհուրդի Նորընտիր անդամները եւ
վստահ ենք որ անոնք իրենց ջանքերը միացնելով Զեր եւ իրենց պաշ-
տօնակից ներու աշխատանքներուն, պիտի գործեն մեր ժողովուրդի հո-
գեւոր օգտին, Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին
Համար:

Մաղթելով կար եւ յաջողութիւն ի ձեառնէ.

Մնամք Հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւն

Աղօթարար

ՄԱՄԲՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի